խցեալ զբերան մանկանն, և զինեալ էարկ ի քիւֆէն, և եդեալ ի վերայ զաղբևս տանն
ել և գնաց ի բաց թողեալ և զգուռնն տանն, և էր մանուկն միամօր մօր իւրոյ. իբրև
ժամք ինչ անցին ի վերայ, ձայնէ մայրն զմանուկն և ոչ ոք էր որ պատասխանէր, իջեալ ի
գաւիթն և ահա բաց են դրունքն, կորեաւ ասեն մանուկն, և սկսան թէլլալս կանչել աստ
և անդ ընդ ամենայն քաղաքն կոստանդնուպօլսի։ Չէօփճին մինչ չև թէլլալքն սփռեալք
ըմբռնեցաւ ի չարիս իւր, զի ի գնալն մինչև ի տեղի իւր, ի ճանապարհին թորեալ ի
դուրս արիւնն ի սէփէթէն, ասէ ցնա ոմն. Զի՞նչ է այդ այր դու զի արիւն հոսէ ի սէփէ-
թէդ, և նա ասէ. Ի տուն մի հաւ մորթեցին, և թոֆայ համարեալ մինչդեռ ես զաղբիւսս
առնուի արկին և զհաւն ի սէփէթն. և հարցանողն համոզեալ ի բանից անտի սկսաւ
ընթանալ զճանապարհ իւր, բայց կաթիլք արեանն ոչ վերջանան ի փողոցացն. և իբրև
էանց ընդ բազում փողոցս յորս ոչ մի, և ոչ տասն հաւու կաթիլք արեանն օգտէին,
դարձաւ չտապով զհետ մտեալ չէօփճիւլին և ժողովեալ զոմանս ի տաճկաց բռնի ետ առ-
նուլ ի վայր զսէփէթն, և հանեալ զմանուկն, և կալեալ զչէօփճին տարան առ դատաւորն։
Իբրև ետես դատաւորն զմանուկն կայտառ, հրամայեաց լուանալ, և մաքրեալ և եդեալ ի
կողմանէ ետ ծածկել որպէս թէ ի քուն իցէ, և կոչեալ զմայր մանկանն, սա է ասէ մա-
նուկն քո, և նա ասէ իմ է, թող ասէ դատաւորն և մի զարթնուցու ի քնոյ անտի. և
ապա ի խրատական և ի մխիթարական բանից զորս խօսէր դատաւորն, ապա ուրեմն
իմացաւ զանցսն կատարածի մանկանն. և եգիտ չարագործն զարժանին պատուհաս։ Ի
խուլումճի չարչրն տօլանտըրճիք ոմանք միաբանեալ իբրև 50 և 60 քսակի վաճառս
առեալ յէսնաֆէն կորեան ի միջոյ. վասն այսր պատճառի և ափտըրահման չէլէպին
տային մեր Վ. Հ. Անտոնին եմուտ ի բանս, զի բազումք ի վաճառականացն ի ձեռս
նորա էին աւանդեալ զվաճառն, սակայն հրաման եղ ի թագաւորէն զի զտցի ամենայն
ստացուած վաճառականացն, և գտին զամենայն ամենայն իրօք, և ոչ եղև ումեք վնաս
ինչ։... յաւուրս յայսոսիկ եկն և այտի ի քաղաքէն նապոլի քաւալիէռ մի, և եկեալ առ
դեսպանն սպանիոյ ի տէօրթիօլաղզըն և ցուցեալ զքաւալիէռական և զսուտ վկայական
թուղթս իւր, նստաւ ի պալատան դեսպանին, սակայն դեսպանն գրեաց թուղթ առ թա-
գաւորն վասն քաւալիէռիս այսորիկ ծանուցեալ և նմին իսկ քաւալիէռին, թէ ես վասն
քոյ գրեմ առ թագաւորն, և նա ասէ, այո՝ նաև ես իսկ ինքնին գրել ունիմ առ նա.
գրեաց և ինքն ևս և ետ ցդեսպանն առաքել ընդ իւրում թղթին։ Ցայնմ միջոցի մինչ չև
եկեալ էր անտի պատասխանի թղթոցս այսոցիկ, սա հանապազ ուտէր ի սեղան դես-
պանին, և ընդ ամենայն մեծամեծաց ֆռանկաց և դեսպանաց ելևմուտս առնէր իբրև
զմի ի մեծամեծ քաւալիէռաց սպանիոյ, և աւուրք էին աւուրք բարեկենդանի և ի պալօյս
և ի խաղս առաւել գտանէր։ Ցաւուր միում ի խաղս ինչ թղթոց կորոյս 100 ոսկի, զոր
վճարելոց է ըստ օրինաց նոցա ի միջոցի քսանևչորս ժամու. յայնմ [= «յայնժամ» պա-
տիւը վրան մոռցուած կ'երևի] գնացեալ եբեր 100 ոսկի չիլ զէրմահպուպ և եկն համարեաց
ումեք որ ոչ էր ի խաղացողաց անտի, ասէ ցնա այրն, ընդէ՞ր համարես ինձ զսոսա,
ասէ քաւալիէռն, մի՞թէ և ոչ դու յօրթախից նոցա իցես, զոր քաջ գիտէր քաւալիէռն զի
չէ, ասէ ցնա այրն, չեմ. ասէ քաւալիէռն, յորժամ գտից զնա ինքն նմա համարեցից
զսոսա, և ժողովեալ զոսկիսն դնէ անդրէն ի ծոց իւր։ Լաւ փոխով և քանի մի քսակի
ակունս և մարգարիտս ի վաճառականաց տեղւոյս, յորոց և մի էր և անտոնն եղբայրն
մեր Վ. Հ. Գաբրիէլին, յորմէ էառ 1700 ղուշի մարգարիտս, էառ և 100 ղուշ փոխ
ի մեծաւորէ ժամու սուրբ աստուածածնին. և հանեալ ի ծոցէն զոսկի ժամացոյց իւր ետ
ի գրաւ, ասէ մեծաւորն, ոչինչ պիտի ինձ գրաւական ի քէն, ասէ քաւալիէռն, ոչ այդ-
պէս է, ես կամիմ զի ամենայն ինչ իմ լինիցի սաղ. յետ քանի մի աւուրց առաքեաց
առ մեծաւորն սպասաւոր, և խնդրեաց զժամացոյցն վասն այնր երեկոյի, զի յայսմ
երեկոյի երթալ ունիմ ասէ ի պալօն այս ինչ դեսպանի, և ամօթ մեծ է երևիլ անդ ան-
ժամացոյց. և յայնմ երեկոյի առեալ ի նմանէ և զժամացոյցն, և ի վճարել պալօյին
անյայտ եղև այրն ընդ առաւօտն. և յետ երկուց աւուրց եհաս պատասխանի թղթոյ
դեսպանին թէ ես ոչ գիտեմ և ոչ առաքեցի այդր զայդպիսի այր։ Ցուզակս առաքեցին
զկնի, և գտին զնա ի պօղազին ի չանաք քալէսին ի կերպարանս նաւավարի, և զամենայն